

## Գայանե Մկրտումյան

### ՄՈՒՀԱՄՄԱԴ ՄԱՐԳԱՐԵԻՆ ԿԵՐԱԳՐՎԱԾ և ՀԱՅԱՍՏԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆԸ ՇՆՈՐՀՎԱԾ ԴԱՇՆԱԳԻՐԸ

Բանալի բառեր - ապահովություն, դաշնագիր, մուսուլման, արաբական արշավանքներ, կրոնական ազատություն, խարաջ, հայկական հեծելազոր, հարկային արտոնություններ, ներքին ինքնավարություն, կրոնական առանձնաշնորհումներ:

Հայ-արաբական պատմամշակութային առնչությունների պատմության մեջ կարևոր տեղ են զբաղեցնում հայկական համայնքներին տրված և Մուհամմադ մարգարեին վերագրված պայմանագրերը, որոնք հայտնի են Ալի Մանշուր հրաման «հրովարտակ» անունով: Դրանք վեհապետական հրովարտակներ կամ արտոնագրեր են, որոնք ըստ ավանդության տրվել են Մուհամմադի կամ նրա հաջորդների կողմից քրիստոնյա համայնքներին՝ եկեղեցական-ազգային առանձնաշնորհումները հաստատելու և պահպանելու համար<sup>1</sup>: XII դարի պատմագիր Սամուել Անեցին վկայում է, որ Մահմեդը՝ «Մուհամմադը» «աւրենսդիր» պատգամաբեր անմոռաց երդմամբ կնքեաց մուրհակ հայոց աշխարհիս համարձակ ունել զքրիստոնեութիւն և վաճառեաց նոցա զհաւատս նոցա»<sup>2</sup> պայմանով, որ յուրաքանչյուր տուն որպէս հարկ վճարի 4 դրամ, որոշակի քանակով հացահատիկ, մեկ ձիատոպրակ ձեռնոց և մազե պարան: Հարկերից ազատվում էին հոգևորականները, հեծյալներն ու իշխանական դասը: Այս պայմանագիրը, ինչպես ասվեց, հայտնի է «Մեծ մանշուր» անունով՝ տարբերելու համար «Փոքր մանշուրից»։ Վերջինս VIII դարում Մուհամմադ իբն Մրվան զորավարի կողմից հայերին տրված կրոնական բովանդակությամբ մի պայմանագիր է, որի մասին հիշատակում են Ղևոնդ Երեցը, Կիրակոս Գանձակեցին և Հովհաննես Դրասխանակերտցին:

Անդրադառնալով «Մեծ մանշուրին»՝ նշենք, որ այն առաջին անգամ հիշատակում է XII դարի պատմիչ Սամուել Անեցին: Նա համառոտակի անդրադառնում է Մուհամմադի գործունեությանը, արաբների արշավանքներին դեպի Հայաստան, Պարսկաստան, Եգիպտոս և նշում, որ Մուհամմադը «զլուխ վաճառականացն եգիպտացի, հաստատեալ էր աղանդովն Արիոսի ու Կերինթոսի, արգել զսուրն ու բանի խրատու նորա հնազանդեցուցին ինքնեաց զմեծ մասն տիեզերաց: Եվ անմոռաց երդմամբ կնքեաց մուրհակ Հայոց աշխարհիս»:

Այս պայմանագիրը, ինչպես ասացինք, հիշատակում է նաև XIII դարի պատմագիր Կիրակոս Գանձակեցին, որի համար աղբյուր է հանդիսացել Սամուել Անեցու ժամանակագրությունը: Այդ պայմանագրին է անդրադարձել նաև XII դարի պատմագիր Մխիթար Անեցին: Սամուել Անեցու երկի առավելագույն օգտագործմամբ են գրված Մ. Անեցու պատմության մեզ հետաքրքրող հատվածները: Մ. Անեցու մոտ

<sup>1</sup> Տե՛ս Կյուլեսերյան Բ., Իսլամը հայ մատենագրության մեջ, Կիեննա, 1930, էջ 122:

<sup>2</sup> Սամուելի քահանայի Անեցոյ Հաւաքունք ի գրոց պատմագրաց, Վաղարշապատ, 1893, էջ 80:

հիշատակված այդ հատվածում կարդում ենք. «Իսկ նա (Մուհամմադը) խրատեալ (Խալիդ) արգելուլ գսուրն և դնել հարկս ի վերայ քրիստոնէից ռամկաց և շինականաց անշուշտ հրամանաւ և երդմամբ... զի տայցեն խարաճ ամեն դրամ դ և երիս մոդ խորբալ և ծիատոպրակ մի և պարան և ձեռնարար մի: Այլ զքահանայս, զվանորայս, զտեղիս ուխտից, զազատս և զհեծեալս թողուլ ազատ»<sup>1</sup>:

Ուսումնասիրության ենթարկելով այս դաշնագիրը՝ Հ. Մանանդյանը նշում է, որ VII դարում Մերձավոր Արևելքում օգտագործվում էր արծաթե դրամ, որն ըստ իր արժեքի հավասար է մոտ 50 կոպեկի, իսկ վերոհիշյալ “4 դրամը” հավասար էր 2 ոսկու, “3 մոդ խորբալը” մաղած ցորենն էր, որը կշռում էր 29 կգ 376 գրամ կամ մոտ 2 փուլ: Այնուհետև պարզ է դառնում, որ այս պայմանագրում «ազատներից» հետո հիշատակված հեծելագորը հավանորեն ռամիկներից կազմված «այրուծին» էր, որ գոյություն ուներ արդեն մարզպանության շրջանում: Այդ հեծելագորը, որն ազատ էր հարկերից, ինչպես նաև ազատներն ու քահանաները օմայաններից ստանում էին հատուկ ռոճիկ՝ տարեկան 100 հազար դահեկան<sup>2</sup>:

Ղևոնդի պատմությունից երևում է, որ հայկական հեծելագորի զինվորների վարձը վճարել են արաբները, որոնք փորձում էին նման քաղաքականությամբ իրենց ռազմական ուժերը պահել կենտրոնացված վիճակում և ռազմական պարտականությունների մի մասը դնել տեղական զինված ուժերի վրա: Պատմագիրը նշում է, որ VIII դարի առաջին կեսերին Աշոտ Բագրատունին գնացել է Հիշամ խալիֆայի մոտ (724-743), որը կարգադրել է վճարել հայկական զորքի անցած երեք տարիների վարձը՝ յուրաքանչյուր տարվա համար 100 հազար արծաթ<sup>3</sup>:

Վերոհիշյալ արտոնագիրը «Ալի մանշուր» անվանելու մասին առաջին գրավոր հիշատակությունը հանդիպում է XIV դարի մատենագիր Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ի «Ընդդեմ տաճկաց» գլխի «6-րդ մոլորութիւն այլազգեաց» հատվածում: Հեղինակն իր գրքի վերոհիշյալ հատվածում սկզբում քննադատաբար է անդրադառնում Մուհամմադի մարզաբեական առաքելությանը, այնուհետև նշում, որ «ի մեծ թվականին Հայոց Ղե (648թ.) եւ (իշխանութեան Հայոց Թէոդորոս Ռշտունու) եւ ի կաթողիկոսութեան Եզրի ի Ժ. ամին (561) ոմն Մահմէտ անուն, յազգէ Իսմայելի, որդի Աբդլայ...արգել գսուրն և բանիւ խրատու հնազանդեցոյց ինքնեան զմեծ մասն տիեզերաց և անմոռաց երդմամբ կնքեաց մուրհակ աշխարհիս Հայոց, որ այժմ կոչի Մեծ Մանշուր»<sup>4</sup>: Այնուհետև շարադրում է պայմանագրի պայմանները՝ տրված Հայոց երկրին:

Իր հերթին Խ. Սամուելյանը, անդրադառնալով պայմանագրում հիշատակված «ազատներ» տերմինի լուսաբանմանը՝ նշում է, որ դրանք մանր հողատեր ազնվականներ էին: Ինչ վերաբերում է «ազատ» եզրին, ապա այն պարսկապարթևական ծագում ունի: Դրա իմաստն ավելի պարզ կլինի, եթե նկատի ունենանք, որ Հայաստանի նախարարական դասը շատ կողմերով մոտ էր Սասանյան

<sup>1</sup> Տե՛ս. Մխիթար Անեցի, Պատմութիւն, Ս. Պետերբուրգ, 1879, էջ 47:

<sup>2</sup> Տե՛ս. Մանանդյան Հ., Երկեր, Բ մասի նյութերը, Ե., 1960, էջ 212:

<sup>3</sup> Տե՛ս Պատմութիւն Ղևոնդեայ մեծի վարդապետի հայոց, Ս. Պետերբուրգ, 1887, էջ 113:

<sup>4</sup> Տե՛ս Կյուլեսերյան Բ., Իսլամը հայ մատենագրության մեջ, էջ 122:

Պարսկաստանի ֆեոդալական կառուցվածքին: Ազատների հիմնական ծառայությունը զինվորական բնույթի էր, ավելի շուտ հեծյալ էին<sup>1</sup>:

Ինչպես տեսնում ենք, Գրիգոր Տաթևացու կողմից հիշատակված պայմանագրի այս օրինակում նշվում են կոնկրետ թվականներ. Թեոդորոս Ռշտունու իշխանության (648թ.) և Եզրի կաթողիկոսության (561թ.) շրջանում Մուհամմադ մարգարեն, իրեն ենթարկելով «տիեզերքի մեծ մասը», պայմանագիր (մուրհակ) է կնքել Հայոց աշխարհի հետ, որով երկրի հոգևորականությունն ու իշխանական դասն ազատվում էին հարկերից, իսկ մնացած բնակիչները պարտավորվում էին վճարել դրանք: Հայտնի է, որ 652թ. հայոց իշխան Թեոդորոս Ռշտունին պայմանագիր է կնքել Ասորիքի կուսակալ Մուավիայի հետ, որի տեքստն առկա է VII դ. պատմագիր, դեպքերին ժամանակակից Սեբեոսի մոտ:

Ակնհայտ է այն փաստը, որ 632թ. Մուհամմադ մարգարեն արդեն կնքել էր իր մահկանացուն և հետևաբար չէր կարող պայմանագիր կնքել հայերի հետ: Հ. Փափագյանն իր աշխատության մեջ անդրադառնալով Սամուել Անեցու կողմից հիշատակված պայմանագրի կնքման ժամանակին՝ այն անվանում է «անհայտ ժամանակին վերաբերող»<sup>2</sup>, իսկ Ա. Տեր-Ղևոնդյանն ավելի հանգամանորեն է մոտենում այս հարցին՝ լույս սփռելով պայմանագրի ստեղծման պատմության վրա և նշելով, որ Սամուել Անեցին այդ կարևոր փաստաթղթում շփոթել է Օմայան Մուհամմադ իբն Մրվան փոխարքայի անունը իսլամի հիմնադրի անվան հետ: Ըստ Ա. Տեր-Ղևոնդյանի՝ հետագայում հայկական պատմագրության մեջ ամրագրվել է ավանդությունն այն մասին, իբր հենց Մուհամմադ մարգարեն է պայմանագիր կնքել հայերի հետ՝ նրանց իրավունքները ճանաչելու և քրիստոնեական կրոնը ազատորեն դավանելու մասին: Ահա թե ինչպես են հետագայում նման պայմանագրերի տեքստեր հայտնվել XVI-XVII դարերում<sup>3</sup>:

Օմայանների շրջանում մեկ երդի կամ ծխի ներքո միավորվում էին մի քանի ընտանիքներ, որոնք, որպես կանոն, բազմամարդ էին<sup>4</sup>: Ձիատոպրակը (կրկնապարկ), մազե պարանը և ձեռնոցը մուսուլմանները հավանաբար արաբական զորքի կարիքների համար էին վերցնում<sup>5</sup>: Արաբները՝ որպես վաչկատուն-անասնապահ ժողովուրդ, գերադասում էին արշավանքների ժամանակ ունենալ առաջին անհրաժեշտության ապրանքներ՝ չափավոր քանակով: Քանի դեռ վերջնականապես չէին հաստատվել նվաճված երկրներում, նրանք հարկերով չէին ծանրաբեռնում բնակչությանը, հարկերից ազատվում էին հոգևորականները, հայկական հեծելազորը:

Արաբական խալիֆայության տիրապետությունը Հայաստանում փաստորեն և իրավականորեն հաստատվել է միայն VII դարի վերջերին, VIII դ. սկզբներին, ուստի մինչ այդ արաբների հաստատած կարճատև տիրապետության պայմաններում հարկային քաղաքականությունը պետք է արտահայտվեր թույլ և համեմատաբար թեթև

<sup>1</sup> Տե՛ս Սամուելյան Խ., Հին հայ իրավունքի պատմություն, հ. 1, Ե., 1939, էջ 219:

<sup>2</sup> Փափագյան Հ., Մատենադարանի պարսկերեն վավերագրերը. 1. Հրովարտականք, պրակ Ա, (ԺԵ-ԺԶ դդ.), վավերագիր 21, Ե., 1956, էջ 99:

<sup>3</sup> Տե՛ս Տեր-Ղևոնդյան Ա., Հոդվածների ժողովածու, Ե., 2003, էջ 294:

<sup>4</sup> Տե՛ս Մելիք-Բախշյան Ս. Հայաստանը VII-IX դարերում, Երևան, 1968, էջ 147:

<sup>5</sup> Տե՛ս Նալբանդյան Հ., Արաբների հարկային քաղաքականությունը Հայաստանում, ԳԱ, Տեղեկագիր, N 12, Ե., 1954, էջ 76:

ծնով: Այս հանգամանքը հատկապես ընդգծված է 652թ. հայ-արաբական պայմանագրում, որով Հայաստանը երեք տարով ազատվում էր հարկեր վճարելուց: Ավելին, Հայաստանից գանձվող հարկի քանակը երբեմն որոշում էին հենց իրենք՝ հայերը: Ոչ մի աղբյուր, բացի Սեբեոսից, հարկերի չափի ու քանակի մասին տեղեկություն չի հաղորդում:

Հ. Մանանդյանը նշում է, որ իրենց տիրապետության առաջին շրջանում Օմայանները եղել են ընդհանուր առմամբ «մատչելի և ժողովրդին մոտ»<sup>1</sup>: Այս շրջանում նվաճողների այդ զգույշ և մեղմ քաղաքականությունը բացատրվում է նաև այն հանգամանքով, որ Օմայանները հաշվի էին առնում Հայաստանի ռազմական մեծ նշանակությունը՝ պահելով նրա ներքին ինքնուրույնությունը ու նախարարական նախկին կարգերը:

Ինչպես տեսնում ենք, Սամուել Անեցին և հայ միջնադարյան մատենագիրները, շարադրելով պայմանագրի տեքստը, հիմնականում չեն լուսաբանում, թե ինչ հանգամանքներում և պարագաներում է այն տրվել Հայոց աշխարհին: Սամուել Անեցին իր «Ժամանակագրության» մեջ գրում է, որ արաբները «կոտորեցին զԲզնունիս զԱղւոյոյվիտ և զՏարոն»՝ ակներևաբար նկատի ունենալով 640թ. արաբական առաջին արշավանքները դեպի Հայաստան, հետո հիշատակում է Մուհամմադի՝ Հայոց աշխարհին տրված պայմանագրի պայմանների մասին: Մուհամմադին է հնազանդվում տիեզերքի մեծ մասը: Խոսքը վերաբերում է արաբական արշավանքներին, որոնց արդյունքում բազմաթիվ երկրներ, այդ թվում Բյուզանդական կայսրությունն ու Սասանյան Պարսկաստանն իրենց հպատակությունն էին հայտնել արաբներին: 652թ. հայոց իշխան Թեոդորոս Ռշտունու և Ասորիքի կուսակալ Մուավիայի միջև կնքված հայ-արաբական պայմանագրով Հայաստանը երեք տարով ազատվում էր հարկեր վճարելուց՝ պահպանելով իր ներքին ինքնավարությունը որպես կիսաանկախ պետություն, պահպանվում էին նաև նախարարների հողատիրական իրավունքները:

Համենայն դեպս այս պայմանագիրը Հայաստանի վերջնական նվաճման փաստն արձանագրող պայմանագիր չէր: Վերոնշյալ պայմանագրի կնքումից հետո էլ Մուավիան շարունակեց իր նվաճումները Հայաստանում: 654թ. արաբները գրավեցին Հայաստանի գյուղերն ու քաղաքները՝ բնակչության հետ կնքելով հաշտության պայմանագրեր: 653թ. Հայոց իշխան դարձավ Համազասպ Մամիկոնյանը, ում օրոք Հայաստանը խզեց իր կապերը Արաբական խալիֆայության հետ: 661թ. իշխանության գլուխ անցան Օմայանները, և Մուավիան հրովարտակ ուղարկեց հայերին՝ հարկ վճարելու համար: 660-ականներին Արաբական խալիֆայությունը փոխադարձ պատերազմների մեջ էր Բյուզանդական կայսրության հետ, և այս շրջանում Հայաստանը վայելում էր լայն ինքնավարություն ու խաղաղ կյանք: 680-ականներին Հայաստանը խզեց իր կապերը Արաբական խալիֆայությունից և դարձավ անկախ<sup>2</sup>: 689թ. Օմայան Աբդ ալ-Մալիք խալիֆան, Բյուզանդիային վերջնական պարտության մատնելուց հետո և լուծելով իր երկրի ներքին խնդիրները, իր եղբորը՝ Մուհամմադ իբն

<sup>1</sup> Մանանդյան Հ., Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, Բ մասի նյութերը, էջ 56:

<sup>2</sup> Տե՛ս Տեր-Ղևոնդյան Ա., Հայաստանը VI-VIII դարերում, Ե., 1996, էջ 100:

Մրվանին, նշանակեց Հայաստանի և Ատրպատականի կառավարիչ: 701թ. նա վերջնականապես գրավեց Հայաստանը: Հավանաբար այս շրջանին էլ վերաբերում է Սամուել Անեցու կողմից հիշատակված և Մուհամմադ Մարգարեին վերագրված պայմանագիրը: Վերոհիշյալ շարադրանքից պարզ է դառնում, որ այդ պայմանագիրը կնքվել է արաբական արշավանքների ու նվաճումների շրջանում: Սամուել Անեցին այս պայմանագիրը տեղադրում է այն հիշատակությունից հետո, երբ Մուհամմադը «արգել գտուրն, և բանի խրատու նորա հնագանդեցուցին ինքեանց զմեծ մասն տիեզերաց»:

Պատմագիրը պայմանագրի պայմանները շարադրելիս չի նշում որևէ թվական, և կամ երբ ու ինչ հանգամանքներում է այն տրվել Հայոց աշխարհին, միայն ընդհանուր ձևով կարող ենք դատել, որ արաբական նվաճումների ընթացքում հայերը կարիք ունեին արաբների պաշտպանությանն ու հովանավորությանը՝ փոխարենը ստանձնելով հարկային պարտավորություններ: Մուհամմադի պայմանագրում նշվում են կոնկրետ պարտավորություններ. ամեն տուն պետք է վճարեր 4 դրամ, ծիսատապրակ, ձեռնոց, մազե պարան, որոշակի քանակով ցորեն: Սամուել Անեցու երկում հիշատակված պայմանագրի այս պայմանները համապատասխանում են արաբական նվաճումների ընթացքում մուսուլման զորավարների կողմից նվաճված երկրների քրիստոնյա բնակիչներին տրված պայմանագրերի պայմաններին՝ կարճ են և կոնկրետ՝ Այս պայմանագիրը, այսպիսով, մի պատմական փաստաթուղթ էր՝ տրված հայերին հավանաբար Մուհամմադ իբն Մրվան փոխարքայի կողմից, որով ամրագրվում էր Հայաստանի վերջնական նվաճումը արաբների կողմից:

Նշենք, որ Սամուել Անեցու ապրած ժամանակաշրջանը՝ XII դարը, ծանր էր Անի քաղաքի բնակչության համար, մի կողմից՝ քաղաքին սպառնում էին Շադդադյան ամիրաները, մյուս կողմից՝ վրաց թագավորության գահակալները: Անեցիները, գտնվելով այս երկու ուժերի միջև, փորձում էին սեփական շահերը պաշտպանել՝ Այդ ձգտումներն արտահայտում էին քաղաքի հոգևորականները, որոնք ունեին հարկային և որոշ այլ արտոնություններ, որոնք կաթողիկոս Բարսեղ Ա Անեցին (1087-1113) էր ստացել սելջուկյան սուլթան Մելիք շահից (1072-1092): Շադդադյանների տիրապետության վերջին շրջանում Անիի հայ բնակչությունը ոչ միայն կրոնական ազատություն էր վայելում, այլև ուներ քաղաքական կշիռ<sup>1</sup>: Եվ մեր կարծիքով՝ այդ շրջանում կենսական անհրաժեշտություն պետք է դառնար իսլամի հիմնադիր Մուհամմադի անունով հայերին տրված ապահովության և հովանավորության պայմանագրի առկայության փաստը, որն իր ձևակերպումն ստացավ Սամուել Անեցու ժամանակագրության մեջ: Հնարավոր է, որ այդ շրջանում հայ հոգևորականությանը տրված կրոնական և հարկային արտոնությունների հիմքում ընկած էր հիշյալ պայմանագրի առկայության փաստը:

Սամուել Անեցին, հավանաբար, փորձել է վաղեմություն հաղորդել վերոհիշյալ պայմանագրին՝ վերագրելով այն ավելի վաղ շրջանին, մասնավորապես արաբական նվաճումների նախօրյակին: Ընդ որում, գալով այս պայմանագրի կնքման կամ

<sup>1</sup> Տե՛ս Մաթևոսյան Կ., Սամուել Անեցու ժամանակագրության ձեռագրերը և նորահայտ լրացումները, Ե., 2004, էջ 10:

ստեղծման պատմությանը, նշենք, որ բոլոր հեղինակները միտում ունեին արտոնագրի կնքումը վերագրել Մուհամմադ մարգարեին:

Կարծում ենք, որ նշելով Մուհամմադի անունը՝ նրանք գիտակցաբար VIII դարի սկզբին Մուհամմադ իբն Մրվանի կողմից հայերին տրված այս արտոնագիրը վերագրել են իսլամի հիմնադիր Մուհամմադին՝ ձգտելով ընդհանրական իմաստ հաղորդել այդ պայմանագրին: Հետագայում այս արտոնագրի պայմանները օգտագործվել են նմանատիպ այլ փաստաթղթերում՝ նշելու համար իսլամի մարգարեի դերը հայերին առանձնաշնորհումներ տալու գործում:

Հետագա դարերում էլ Մուհամմադ մարգարեի անունով հայ կրոնական և քաղաքական շրջանակները կազմել ու շրջանառության մեջ են դրել պայմանագրեր՝ մուսուլմանական տիրապետության տակ ապրող հայերին արտոնություններ տալու վերաբերյալ:

**Гаяне Мкртумян, Договор предписываемый пророку Мухаммеду и представленный армянскому народу.** В статье исследуется договор предписываемый пророку Мухаммеду и представленный армянскому народу. Договор известен именем Большой Маншур. В статье показывается, что в начале 8-го века этот договор был представлен армянскому народу арабскими властями, посредством полководца омейядов Мухаммеда ибн Мрван. На основе этого договора армяне получали свободу и поддержку, с условием оплаты налогов. Армянские историки, однако, предписали этот договор пророку Мухаммеду.

**Gayane Mkrtumyan, The agreement prescribed to Prophet Mohammed and presented to Armenian nation.** In the article the agreement prescribed to Prophet Mohammed and presented to Armenian nation is discussed. It is known as Great Manshur (treaty). In the article it is shown that, at the beginning of 8-th century it had been given to Armenians by Arabian powers and by means of Umayyad commander Mohammad ibn Mrvan. By this agreement Armenians were getting the guarantee of security and support on condition of paying taxes. But the Armenian historians prescribed this treaty to Prophet Mohammed.

**Գայանե Մկրտումյանը:** Սովորել է ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի արաբագիտության բաժնում, 2000թ.-ից դասախոսում է նույն ֆակուլտետի արաբագիտության ամբիոնում: Զբաղվում է միջնադարյան հայ-արաբական փոխհարաբերությունների պատմության հիմնահարցերով: